

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ հյամայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

1. ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1):

1-ին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով մասնակցում է համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների կազմման

աշխատանքներում: Կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը:

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ սահմանված կարգով իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառումը, և մասնակցում է համայնքի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին:

Իրականացնում է իր պաշտոնի անձնագրով սահմանված այլ գործառնություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է միջնակարգ կրթություն:

Սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետով սահմանված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն՝

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքների, Աշխատակազմի կանոնադրությունը և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2019 թվականի դեկտեմբերի 6 -ին ժամը 15.00-ին Արևադաշտի համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Արևադաշտի համայնքապետարան աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթեր.

- Դիմում՝ մրցութային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս /

- Տվյալ պաշտոնն ղբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների աշխատանքային

ունակությունների տիրապետման տեսանկյուններից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պաճենների բնօրինակների հետ միասին:

- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 15 -ի N 98-Ա որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով:

- Արական սեռի անձինք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեններ:

. Մեկ լուսանկար 3x4 չափի

- Անձնագրի պատճենը:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություն ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտի համայնքապետարան Սարի թաղի N 1 վարչական շենք հեռ. 094-36-62-14 և ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ ների հարցերով վարչություն, / հասցեն՝ ք. Արմավիր Աբովյան 71, հեռախոսներ (0237)2-07-70, (0237)2-76-49:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր՝ 9⁰⁰- ից մինչև 18⁰⁰-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2019թվականի նոյեմբերի 22 -ը ժամը 18.00-ն: